«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում

Հաստատություն՝ Երևանի հ. 129 մսուր-մանկապարտեզ

Դաստիարակ՝ Աննա Գևորգյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

2023թ.

Բովանդակություն

Ներածություն----------3

Գլուխ 1.Նախադպրոցական կրթություն

1.1 Նախադպրոցական կրթություն՝ նպատակները, բովանդակությունը, ակնկալվող կարողունակությունները----------5

1.2 Ուսուցման մեթոդներ----------7

1.3 Պարապմունքների կազմակերպում----------9

Գլուխ 2.Ինտեգրված պարապմունքներ

2.1 Ի՞նչ է ինտեգրված պարապմունքը----------11

2.2 Ինտեգրված պարապմունքների կազմակերպման առանձնահատկությունները----------13

2.3 Ինտեգրված պարապմունքները միջին խմբում----------17

2.4 Ինտեգրված պարապմունքի պլան----------18

Եզրակացություն----------23

Հավելված----------25

Գրականության ցանկ----------26

Ներածություն

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների զարգացման տեմպը, ուսուցման ժամանակակից մեթոդները, երեխաների անընդհատ ինքնակրթության և զարգացման անհրաժեշտությունը պարտադրում են ուսուցման գործընթացում կիրառել այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք բարձրացնում են կրթության արդյունավետությունը և որակը, ապահովում ինքնուրույն գործունեության շարժառիթներ, նպաստում են միջառարկայական կապերի ամրապնդմանը: Մանկապատրեզներում կրթության բարձր որակ ապահովելու և ուսումնական գործընթացում, երեխաների ուշադրությունը գրավելու, նրանց հետաքրքրությունները բավարարելու համար անհրաժեշտ է ակտիվ, բովանդակալից, հետաքրքիր, դիդակտիկ նյութերով հագեցած, ինտերակտիվ պարապմունքների կազմակերպում: Այս նպատակին հասնելու ուղիներից է՝ ուսումնառությունը ինտեգրված պարապմունքների միջոցով կազմակերպելը:

Ինտեգրված ուսուցումը ուսումնական ծրագրի տարբեր բաժինների միջև կապերի ստեղծումն է մեկ հետաքրքիր նյութի ուսումնասիրման միջոցով: Ճիշտ կազմակերպված ինտեգրված ուսուցման դեպքում, երեխաները սովորում են սովորել ամբողջ կյանքի ընթացքում:

Հետազոտական աշխատանքիս **թեման** է՝ «Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում»:

Նպատակն է՝ բացահայտել ինտեգրված պարապմունքների կազմակերպման դերը կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում:

Նպատակից բխում են հետևյալ **խնդիրները՝**

1. ուսումնասիրել թեմայի վերաբերյալ ուսումնամեթոդական գրականությունը
2. բացահայտել ինտեգրված պատապմունքների էությունը
3. նշել ինտեգրված պատապմունքներ կազմակերպելու առանձնահատկությունները
4. կատարել համապատասխան աշխատանքներ միջին խմբում և ստուգել նման պարապմունքների արդյունավետությունը:

Ինտեգրված պարապմունքները ապահովում են երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական և գեղագիտական ոլորտների համակողմանի և ներդաշնակ զարգացումը:

Գլուխ 1.Նախադպրոցական կրթություն

1.1 Նախադպրոցական կրթություն՝ նպատակները, բովանդակությունը,ակնկալվող արդյունքները

Նախադպրոցական կրթությունը նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխայի մտավոր, ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացման, դաստիարակության, ուսուցման և խնամքի գործընթաց է, որը համարվում է հանրակրթության սկզբնական աստիճան և իրականացվում է նախադպրոցական կրթության ծրագրով:

Նախադպրոցական կրթությունը նպատակաուղղված է յուրաքանչյուր երեխայի՝

1. մտավոր, ֆիզիկական, հոգեկան և սոցիալ-անձնային զարգացմանը.
2. ինքնասպասարկմանը, սոցիալականացմանը, կյանքի հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը.
3. աշխարհաճանաչման ինքնուրույնության և ինքնաճանաչման փորձի ձեռքբերմանը.
4. երեխայի իրավունքների պաշտպանությանը, նրա արժանապատվության նկատմամբ հարգանքին:

Նախադպրոցական կրթության բովանդակությունը ներառում է զարգացման հետևյալ ոլորտները՝

1. շարժողական ոլորտ
2. խոսքի և հաղորդակցական ոլորտ,
3. հուզական, սոցիալ- անձնային ոլորտ,
4. իմացական ոլորտ,
5. ինքնասպասարկման, անվտանգության, առողջ ապրելակերպի ոլորտ:

Այս ոլորտներն արտահայտվում են չափորոշչում:

Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչով սահմանված ինը կարողունակությունների ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ միջին խմբում սաների հետ օրվա կանոնակարգային պահերին կազմակերպվող աշխատանքներն արտացոլվում են վեց ծրագրային բաղադրիչներում՝

1. Խոսքի զարգացում
2. Ֆիզկուլտուրա
3. Ինձ շրջապատող աշխարհը
4. Մաթեմատիկական տարրական պատկերացումներ
5. Երաժշտություն,
6. Կերպարվեստ և կառուցողական աշխատանք։

Ծրագրային այս բաղադրիչների զատումը պայմանական է,դրանք սերտորեն փոխկապակցված են։

Սանի զարգացումը համակողմանի և լիարժեք է ընթանում, եթե բոլոր բաղադրիչներով միաժամանակ և շարունակական աշխատանք է տարվում։ Ծրագրային բոլոր բաղադրիչներով սահմանված վերջնարդյունքներն ուղղված են առանցքային կարողունակությունների ձևավորմանն ու զարգացմանը՝

1. լեզվական և հաղորդակցական կարողունակություն,
2. ճանաչողական և մոտիվացիոն կարողունակություն,
3. ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,
4. ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,
5. թվային և մեդիա կարողունակություն,
6. մշակութային կարողունակություն,
7. մաթեմատիկական և տեխնիկական կարողունակություն,
8. տնտեսական կարողունակություն,
9. ֆիզիկական կարողունակություն։

Նախադպրոցական տարիքի երեխաների կարողունակությունները ձևավորվում են ուսուցման և դաստիարակության կազմակերպման տարիքային ձևերի միջոցով, իսկ վերջնարդյունքները նկարագրում են, թե ինչ պիտի իմանա, կարողանա անել և հասկանա երեխան։

Վերջնարդյունքներն ուղղված են կարողունակությունների ձևավորմանը։

1.2 Ուսուցման մեթոդներ

Ուսուցման գործընթացն իրականացվում է տարբեր մեթոդների օգնությամբ:

Մեթոդը նպատակին հասնելու միջոց է, ուղի: Այն գործիք է դաստիարակի համար իր կրթադաստիարակչական նպատակներին հասնելու ճանապարհին:

Ներկայումս նախադպրոցական կրթության դիդակտիկայում լայն տարածում են գտել ուսուցման ժամանակակից մեթոդները՝ խաղային, գործնական, ակտիվ ուսուցման: Վերջիններս հայտնի են որպես ինտերակտիվ կամ փոխգործուն մեթոդներ:

Խաղային մեթոդների առավելությունները պայմանավորված են խաղային մթնոլորտի բարձր հուզականությամբ, երեխայի համար խաղի բնական եւ հոգեհարազատ բնույթով:

Ուսուցանող են խաղի բոլոր տեսակները, որոնք կատարում են երկու կարեւոր գործառույթ՝.

- նպաստում են գիտելիքների ամրապնդմանն ու խորացմանը,
- խթանում են նոր գիտելիքների արդյունավետ յուրացումը:

Հետաքրքիր խաղային մեթոդ է, օրինակ, երեւակայական իրադրությունների խաղարկումը, որի ընթացքում երեխան գիտելիքներ եւ կարողություններ է ձեռք բերում դերային գործողությունների միջոցով:

Ուսուցման գործնական մեթոդների խմբին են դասվում տարատեսակ վարժությունները, փորձերը, հետազոտությունները եւ մոդելավորումը:

Ակտիվ ուսուցման մեթոդները (փոխգործուն մեթոդները) նպաստում են երեխաների ազատ եւ ինքնուրույն մտածելու, սեփական կարծիք հայտնելու, պատասխանատու որոշումներ կայացնելու, ընտրություն կատարելու հմտությունների զարգացմանը, ճանաչողական գործընթացում ինքնուրույն կողմնորոշմանը: Այդ մեթոդները զույգերով, խմբով մտավոր աշխատանքի եղանակներն են՝ ուղղված համատեղ որոնումներին ու մտորումներին, դրանց քննարկմանը, ընդհանուր որոշումների կայացմանն ու իրագործմանը:Ուսուցման փոխգործուն մեթոդները համապատասխանում են երեխայակենտրոն ուսուցման սկզբունքներին եւ շատ

արդյունավետ են:Փոխգործուն մեթոդները բացառում են որեւէ մեթոդի առաջնայնությունը, գերակայությունը, ինչպես նաեւ մեկ մեթոդի գերակշռությունը մյուսների նկատմամբ: Փոխգործուն ուսուցման սկզբունքներ են.

- փոխազդեցությունը, փոխուսուցումը,
- երեխայի ակտիվությունը,
- համագործակցությունը,
- ինքնարտահայտման խրախուսումը,
- հետադարձ կապը:

Փոխգործուն մեթոդների առանձնահատկություններն են՝.

- երեխայի իմացական գործընթացների կազմակերպումը,
- հետաքրքրությունների բացահայտումը,
- համագործակցային կարողությունների զարգացումը,
- անհատական առանձնահատկությունների բացահայտումը,
- հաղորդակցական ունակությունների ձեւավորումը,
- տրամաբանական մտածողության զարգացումը,
- ինքնուրույնության խրախուսումը,
- վերլուծական կարողությունների ձեւավորումը:

Փոխգործուն մեթոդների արդյունավետ կիրառման ընդհանուր բանաձեւեր չկան: Ցանկացած խումբ, պարապմունք եզակի է եւ անկրկնելի:

Դաստիարակի խնդիրն է ընդհանուր սահմանված մեթոդը հարմարեցնել կոնկրետ իրավիճակին, իր ունեցած մեթոդական զինանոցից ընտրել համապատասխան մեթոդը՝ ելնելով իրականացվող աշխատանքի նպատակներից:

1.3.Պարապմունքների կազմակերպում

Սաների օրվա կանոնակարգում իրենց կարևոր տեղն ունեն պարապմունքները: Պարապմունքների ընթացքում երեխաները ձեռք են բերում որոշակի գիտելիքներ և հմտություններ, որոնք այնուհետև ավելի խորը յուրացվում և ամրապնդվում են տարբեր խաղերի, մեծերի և հասակակիցների հետ ամենօրյա հաղորդակցման և ինքնուրույն գործունեության ընթացքում: Պարապմունքները իրենց բովանդակությամբ և կազմակերպման ձևով չպետք է առանձնացվեն և շատ տարբերվեն մյուս աշխատանքներից, որոնք իրականացվում են երեխաների հետ օրվա տարբեր ժամերին:

Պարապմունքները պետք է ներառվեն օրվա աշխատանքներում այնպես, որ անցումը պարապմունքից երեխայի գործունեության մյուս ձևերին լինի բնականոն, տրամաբանական, սահուն և հիմնավորված:

Անհարժեշտ է հիշել, որ օրվա ընթացքում երեխաների հետ տարվող բոլոր աշխատանքները՝ անկախ դրանց բնույթից, հավասարաչափ կարևոր են և իրենց դերն ունեն երեխայի համակողմանի զարգացման գործում: Պարապմունքների միջև պետք է ապահովել 10-15 րոպեանոց ընդմիջումներ/դադարներ, որոնք անհրաժեշտ են երեխաների ֆիզիկական ակտիվացման և մի պարապմունքից մյուսին սահուն անցումն ապահովելու համար: Պարապմունքները տարվում են երկու ձևով՝

ա) համընդհանուր (ֆրոնտալ) ուսուցման ձևով, որը հիմնականում կատարվում է նոր նյութի հաղորդման ժամանակ,

բ) մի քանի պարապմունքների ինտեգրման ճանապարհով, օրինակ՝ խոսքի զարգացում - կերպարվեստ, մաթեմատիկա-երաժշտություն, մաթեմատիկա-կառուցողական աշխատանք, մաթեմատիկա-ապլիկացիա, խոսքի- զարգացում-ապլիկացիա և այլն: Թեմաների զարգացումը, նյութի ամրապնդումը, ամփոփումը կարելի է կատարել՝ կիրառելով ուսուցման փոխգործուն մեթոդները, օգտագործելով աշխատանքային կենտրոնները և կազմակերպելով փոքր խմբերով

աշխատանք: Պարապմունքները երեխաների համար հնարավորություն են ստեղծում ճանաչողական գործընթացը դարձնել իրական փորձառություն, որն օգնում է յուրաքանչյուր երեխայի լիարժեք բացահայտել իր ստեղծագործական կարողությունները, բավարարել հետաքրքրությունները: Պարապմունքների ժամանակ երեխաները հետազոտում են, ուսումնասիրում, պրպտում, լուծումներ գտնում, որոշումներ կայացնում: Նրանք սովորում են ոչ միայն դաստիարակին լսելով, այլ նաև սեփական փորձով, ընկերների հետ քննարկելով, պարապմունքին մասնակցող այլ մեծահասակների հետ շփվելով: Պլանավորված պարապմունքներն իրականացվում են խմբով, ենթախմբերով, անհատական՝ կախված ուսուցանվող նյութի բովանդակությունից, թեմայի նպատակներից, երեխաների նախապատրաստվածության մակարդակից և հոգեբանական առանձնահատուկություններից, ծնողների պահանջներից:

Գլուխ 2. Ինտեգրված պարապմունքներ

2.1. Ի՞նչ է ինտեգրված պարապմունքը

Ինտեգրված պարապմունքը պարապմունքի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը: Այսպիսի պարապմունքի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված պարապմունքը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը:

«Ինտեգրում» (Integr-ամբողջ)- լատիներենից թարգմանաբար նշանակում է՝ վերականգնում, համալրում, մասերի միավորում մեկ ամբողջի մեջ՝ ոչ թե մեխանիկորեն, այլ փոխադարձ ներթափանցմամբ: Նշանակում է համատեղել գիտելիքները տարբեր կրթական ոլորտներից հավասար հիմունքներով՝ լրացնելով միմյանց: Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս ձևավորելու հստակ պատկերացումներ ուսուցանվող նյութի մասին, արթնացնում են հետաքրքրություն առարկայի նկատմամբ: Ինտեգրված պարապմունքի համար կարևոր է նյութի ընտրությունը, ուսումնական միջոցների բազմազանությունը: Ինտեգրված պարապմունքները նպատակաուղղված են տարբեր մեթոդիկաների միջև կապերի դրսևորմանը, առարկաների կամ երևույթների համակողմանի ուսումնասիրմանը, գիտելիքների համակարգվածությանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը:

Ուսուցման արդյունավետությունը բարձրացնում են ոչ թե մեխանիկորեն սերտած ինտեգրացված տեղեկություններով, այլ՝ իրականությունը, միջառարկայական կապերով: Ուստի պարապմունքների պրոցեսի ընթացքում միջառարկայական կապերի պահպանումն ունի բազմաբովանդակ խնդիրներ՝ սկսած սաների մոտ գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորումից,

վերջացրած՝սանի մոտ ակտիվ մասնակցություն ցուցաբերելու ցանկություն սերմանելուց:

Այսօրվա մանկապարտեզներում ուսուցումը կազմակերպվում է առանձին բաղադրիչներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչն առանձին բաղադրիչներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Համաշխարհային մանկավարժական միտքը վկայում է, որ ուսուցման այս ձևը արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն: Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են միավորված (ինտեգրված)պարապմունքի հետևյալ տեսակները.

- միջառարկայական - (երկու առարկաներ միջև՝ օր. մաթեմատիկա-ապլիկացիա)
- բազմառարկայական -(երկուսից ավել առարկաներ միջև՝օր. մաթեմատիկա-ապլիկացիա- երաժշտություն):

Անհրաժեշտ է միևնույն թեմայի բովանդակության շուրջ կառուցել ինտեգրված պարապմունք և հստակեցնել առաջադրանքը պարապմունքի յուրաքանչյուր փուլում: Անհրաժեշտ է ընդհանրական հասկացությունները ներկայացնել հաջորդականությամբ, կիրառելով սաների ճանաչողական գործունեության ակտիվացման տարբեր միջոցներ: Ինտեգրված պարապմունքն ուղղված է թեմայի ամբողջական բացահայտմանը գործունեության տարբեր ձևերի կիրառմամբ՝ խաղ, աշխատանքային գործունեություն, կերպարվեստային գործունեություն, պարապմունքներ:

Մասնագիտական ուսումնասիրություններում մանրամասն վերլուծվել է ինտեգրված պարապմունքը՝ թե բովանդակային, թե կառուցվածքային կողմերով: Ինտեգրված պարապմունքի կառուցվածքային կողմը պահանջում է նյութի

հստակություն և տարբեր մեթոդիկաների միջև տրամաբանական կապի ապահովում: Դա կարող է իրականացվել պարապմունքի ընթացքում՝ ինտերակտիվ մեթոդների և ժամանակակից մոտեցումների կիրառմամբ:

Ինտեգրված պարապմունքին նախապատրաստվելիս դաստիարակը կարող է օգտվել ինտելեկտուալ քարտի մեթոդից: Ինտելեկտուալ քարտը որոշակի թեմայի բովանդակային ուսումնասիրման կառուցվածքային, տրամաբանական սխեմա է, որտեղ արտացոլվում են հանգուցային հասկացությունը կենտրոնում, իսկ օժանդակ հասկացությունները՝ հանգուցային հասկացության շուրջ: Մշակված քարտը հիմք է հանդիսանում տարբեր թեմաներով պարապմունքների հետագա մոդելավորման և անցկացման համար: Ինտեգրված պարապմունքին առաջարկվող թեմաներն են՝ «Ջուր», «Տարվա եղանակներ», «Մրգեր», « Բանջարեղեն», «Կենդանական աշխարհ», «Տոնածառ», Բնություն», «Հաց», «Անտառ», «Իմ մանկապարտեզը», «Հայրենիք», «Մարտի 8», «Ամանոր», «Հայոց բանակի օր», «Անվտանգ վարքագիծ» և այլն:

2.2 Ինտեգրված պարապմունքների կազմակերպման առանձնահատկությունները

Ինտեգրված պարապմունքներն ապահովում են երեխայի մտավոր, սոցիալական, հուզական, ֆիզիկական եւ գեղագիտական ոլորտների համակողմանի զարգացումը:

Ինտեգրված պարապմուքները կարեւորում են գործունեության այն ձեւերը, որոնք պահանջում են ինքնուրույն մտածողություն, նախաձեռնողականություն, համագործակցություն, հնարամտություն, անձնական կարգապահություն, շրջապատում կատարվող փոփոխությունների ճիշտ ընկալում:

Ինտեգրված ուսուցումը ենթադրում է տարբեր մեթոդիկաների միջեւ կապերի ստեղծում, այսինքն, որեւէ թեմա ուսումնասիրելիս ամփոփվում են տարբեր մեթոդիկաներից հարցեր եւ երեխաները հասկանում են տարբեր մեթոդիկաների միջեւ գոյություն ունեցող կապերը: Երեխաներին առաջարկվում են հետաքրքիր թեմաներ կենսական հարցերի շուրջ: Ուսումնասիրվող թեմայի մեջ երեխաների հետաքրքրություններին կենտրոնական տեղ հատկացնելով՝ ապահովվում է

երեխաների շահագրգռվածությունն ու հետաքրքրասիրությունը թեմայի նկատմամբ:

Դաստիարակը ինտեգրված պարապմունքին նախապատրաստվելիս հաշվի է առնում հետեւյալը.

- թեման համապատասխանում է երեխաների հետաքրքրություններին,
- ընտրված թեման նպաստում է երեւակայության և ստեղծագործական մտածողության խթանմանը,
- ընտրված թեման անհրաժեշտ է անցնել այնպես, որ ապահովվի բոլոր երեխաների մասնակցությունը,
- երեխաները հնարավորություն ունենան համագործակցելու և որոշակի պատասխասխանատվություն կրելու,
- երեխաները կարողանան ավելացնել իրենց գիտելիքներն ու փորձը՝ միջավայրի, առարկաների, մարդկանց և իրենց շրջապատում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ:

Երեխաների ճանաչողական հետաքրքրությունների ձեւավորման, ինչպես նաև ճանաչողական գործունեության ակտիվացման նպատակով, ինտեգրված պարապմունքների ընթացքում կիրառվում են տարբեր մեթոդներ, դաստիարակը օգտվում է նաև տարբեր միջոցներից:Ուսուցման կազմակերպման ավանդական ձեւերը պարբերաբար մշակվում և կատարելագործվում են: Փորձը ցույց է տալիս , որ փոխներգործուն մեթոդների կիրառումը նախադպրոցական տարիքի երեխաների համար պարապմունքները դարձնում է հաճելի, զվարճալի և արդյունավետ՝ հատկապես, եթե դրանք անցկացվում են կերպարվեստային միջոցների ու երաժշտության զուգակցությամբ:Այստեղ կարեւոր է նաեւ այն, որ ուսուցման գործընթացին մասնակցում են տվյալ տարիքային խմբի բոլոր երեխաները: Նման գործունեության ընթացքում ակտիվորեն զարգանում են սանի հոգեկան գործընթացները: Նրանք սովորում են համագործակցել հասակակիցների հետ, բարձրանում է երեխայի ինքնագնահատականը, հնարավորություն է ստեղծում ճանաչողական գործընթացը դարձնել իսկապես հագեցված: Դա օգնում սաներին՝ բացահայտելու իրենց ուժեղ կողմերը, ստեղծագործական ունակությունները, բավարարելու հետքրքրությունները:

Նման պարապմունքները կարող են անցկացվել ինչպես ենթախմբերով , այնպես էլ ամբողջ խմբի հետ՝ ըստ պարապմունքի նպատակի, տեսակի և ուսումնական նյութի:

Ուսուցման ընթացքում դաստիարակը հաշվի է առնում երեխաների անահատական տվյալները. Այսինքն՝ յուրաքանչյուր երեխա հնարավորություն է ստանում ուսուցանվող նյութը յուրացնել ըստ իր հոգեկան զարգացման, խառնվածքի և ընկալման կարողությունների: Երեխաների նկատմամբ անհատական մոտեցումը բացառում է ուժեղների և թույլերի միջև հակասությունների առաջացումը և խորացումը:

Ինտեգրված պարապմունքները հնարավորություն են տալիս կիրառելու ուսուցման ինտերակտիվ մեթոդներ, աշխատելով փոքր խմբերով, համագործակցելով հասակակիցների հետ, յուրաքանչյուր երեխա գտնվում է բավականին շահեկան և բարենպաստ պայմաններում: Այսպես՝

- Համագործակցելով հասակակիցների հետ, նա ավելի արագ է ինտեգրվում;
- Նույն ժամանակահատվածում խմբի բոլոր երեխաները զբաղված են;
- Համագործակցության ընթացքում բարձրանում է երեխայի ինքնագնահատականը;
- Երեխան հնարավորություն է ունենում ազատ ինքնաարտահայտվելու
- Ակտիվ աշխատում և զարգանում են թե օժտված երեխաները, թե թույլ կարողություն, թե առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները;
- Օգնելով ընկերներին ՝ օժտված երեխան նորից սովորում է , ամրապնդում է իր իմացածը;
- Երեխաները հնարավորություն են ստանում սովորել սեփական սխալների վրա,
- Ուսուցումը վեր է ածվում հաճելի համագործակցության և այլն...

Պարապմունքի ընթացքում կազմակերպվում է անհատական, խմբային, զույգերով աշխատանք, կիրառվում են հետազոտական, դերային խաղեր, ստեղծագործական գործունեություն եւ այլն:

Ժամանակակից ինտեգրված պարապմունքներին ներկայացվում են հետեւյալ պահանջները.

- Նոր մեթոդների կիրառում,
- Փոխազդեցություն, փոխուսուցում,
- Երեխայի ակտիվություն,
- Համագործակցություն
- Ինքնաարտահայտման խրախուսում
- Հետադարձ կապ և այլն:

Պարապմունքի ձևի ընտրությունը ըստ մեթոդների, որոշում է դաստիարակը՝ ծրագրով նախատեսված թեմային համապատասխան: եթե տվյալ թեման կարելի է մատուցել խաղի, խաղ-պարապմունքների, էքսկուրսիաների կամ ինտեգրված պարապմուննքերի ձևով, ապա դաստաիարկն այդ ընտրությունը ամրագրում է պլանավորման մեջ: Այն չի կարող ինքնանպատակ լինել կամ կամայական բնույթ կրել, այլ պայմանավորված է՝

- Ուսուցման նպատակներով և խնդիրներով,
- Ուսուցանվող նյութի բովանդակությամբ, ծավալով և բարդությամբ,
- Երխաների պատրաստվածության մակարդակով
- Տարիքային առանձնահատկություններով,
- Երեխաների թվաքանակով,
- Դաստիարակի պատրաստվածության մակարդակով:

Ուսուցման ինտերակտիվ մեթոդների կիրառման պայմաններն են.

- Աշխատանքում պետք է ներգրավված լինեն բոլոր երեխաները,
- Եթե տվյալ տարիքային խումբը մեծաքանակ է , ապա արդյունավետ է աշխատանքը կազմակերպել փոքր խմբերով:
- Փոքր խմբերով աշխատանքի դեպքում բոլորը պետք է արտահայտվելու հնարավորություն ունենան, յուրաքանչյուր ենթախումբ ներկայացնելու է խնդրի վերաբերյալ իր տեսակետը:
- Հարկավոր է խմբասենյակը նախապատրաստել այնպես, որպեսզի երեխաները հեշտությամբ աշխատեն մեծ և փոքր խմբերով: Ցանկալի է , որ նստելու դիրքը եւ

աթոռների դասավորությունը նպաստեն դրան: Աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը պետք է պատրաստել նախապես:

Ինտեգրված պարապմունքները կարող են ծառայել նաև որպես ամփոփիչ պարապմունք, որի ընթացքում դաստիարակը կկիրառի նոր մեթոդներ: Ավելի հաճախ դրանք անհրաժեշտ է օգտագործել, որպես ամենօրյա պարապմունքներ, որոնք ամենևին կարիք չունեն նախապես երեխաներին նախապատրաստելու: Նման պարապմունքները արդյունավետ անցկացնելու համար անհրաժեշտ է միայն պլանավորել պարապմունքի ամբողջ ընթացքը, հստակ ձևակերպել նպատակները ,նախապատրաստել անհրաժեշտ նյութերը ըստ ենթախմբերի: Այսպիսի պարապմունքների ընթացքում երեխաներն աստիճանաբար սովորում են ինքնուրույն աշխատել եւ այդ կերպ ձեւավորվում են հետազոտական հմտություններ եւ կարողություններ: Նրանք սովորում են համարձակ արտահայտել իրենց կարծիքները այս կամ այն հարցի շուրջ: Կարողանում են ամփոփել իրենց սովորածը և իմացածը՝ ընտրած թեմայի շրջանակում: Կատարում են համեմատություններ եւ գտնում տարբերությունները, ազատ եւ անկաշկանդ երևակայությամբ ստեղծագործում են և ներկայացնում իրենց կատարած աշխատանքները: Սովորում են կարծիք հայտնել ընկերոջ կատարած աշխատանքի վերաբերյալ:

2.3.Ինտեգրված պարապմունքները միջին խմբում

Հայտնի է, որ կյանքում ամեն ինչ փոխկապակցված է և ոչինչ մեկուսի չի կարող գոյություն ունենալ: Այդպես էլ երեխաներն աշխարհն ընկալում են որպես մեկ ամբողջություն: Նրանք ակտիվ սովորողներ են և ձգտում են ամբողջապես ճանաչել այն վայրը, որտեղ ապրում են: Նրանք իրենց գիտելիքները, կարողություններն ու հմտությունները կառուցում են հասակակիցների, ծնողների և այլ մեծահասակների հետ փոխհարաբերությունների, ֆիզիկական ու հասարակական միջավայրի ակտիվ ուսումնասիրության միջոցով: 4-5 տարեկանները հետաքրքրասեր են, ունեն վառ երևակայություն, սիրում են փորձարկումներ կատարել:

Դաստիարակի խնդիրն է՝ ապահովել

- Տարիքային զարգացման չափորոշիչներին համապատասխան գործունեություն,
- Կազմակերպում ենք ուսումնական ծրագրի բաղադրիչներինհամապատասխան ուսուցում
- Երեխայակենտրոն համագործակցային ուսուցում:

Կատարում ենք շարունակական դիտարկումներ և գնահատում, որպեսզի բարելավենք ուսումնական և դաստիարակության հետ կապված աշխատանքները: Այդ կերպ հնարավոր է իրականացնել թեմատիկ ինտեգրված ուսուցում:

2.4.Ինտեգրված պարապմունքի պլան

Ծրագրային բաղադրիչ՝ ԻՇԱ

Թեմա՝ Աշուն

Նպատակը՝ ձևավորել տարրական գիտելիքներ տարվա եղանակների, դրանց հերթականությամբ պայմանավորված բնության սեզոնային փոփոխությունների և մարդկանց կյանքում աշնանը կատարվող փոփոխությունների մասին: Դաստիարակել սեր հայրենի բնության հանդեպ, շարունակել սաներին հաղորդակցել ազգային մշակույթին: Զարգացնել երեխաների մեջ փոխկապակցվածության գաղափարը, ուշադրությունը և հիշողությունը:

Անհրաժեշտ նյութեր՝ նկարներ տարվա եղանակների վերատպություններով, մրգեր, աշնանային տերևներ, Մ. Սարյանի «Աշնանային ծաղիկներ», Գ. Բաշինջաղյանի «Աշուն» կտավների վերատպություններ:

Վերջնարդյունք՝ Իմանա տարվա եղանակները, տարբերակի աշնանը տեղի ունեցող փոփոխությունները, ընկալի բնության երևույթների պատճառահետևանքային տարրական կապերը, նկատի բնության գեղեցկությունը:

Պարապմունքի ընթացքը

Պարապմունքն անցկացրել եմ ԽԻԿ համակարգով:

Խթանման փուլ

Սկսել աշնան մասին հանելուկով.

Ծառն է մերկացել, քամին է փչում,

Ցուրտ ու մռայլ է, անձրև է մաղում,

Թռել են, փախել թիթեռ ու թռչուն

Դե գուշակեցեք՝ այդ ե՞րբ է լինում:

Երեխաների պատասխանները լսելուց հետո, առաջարկել նկարագրել տվյալ պահին օրվա եղանակը. Հնչում է Ա. Վիվալդիի «Աշուն» ստեղծագործությունը:

Իմաստի ընկալման փուլ

Դաստիարակ- Տարվա ո՞ր եղանակն է այժմ:

-Թվարկե՛ք աշնան ամիսները:

-Օրացույցի ո՞ր օրվանից է սկսվում աշունը:

- Ի՞նչ է տեղի ունենում աշնանը բնության մեջ, կենդանիներ ու թռչունների վարքագծում:

-Ո՞ր թռչուններն են չվում տաք երկրներ և ինչու՞:

-Որո՞նք են մնում մեզ մոտ ձմեռելու:

Երեխաներ- Կան թռչուններ, ոնոնք թռչում են տաք երկրներ՝ ծիխեռնակը, արագիլը, սարյակները, իսկ մեզ մոտ մնում են ձմեռելու կաչաղակները, ագռավները, ճնճղուկները և այլն:

Դաստիարակ- Ինչո՞վ են զբաղվում մարդիկ դաշտերում, բանջարանոցներում, այգիներում:

-Ինչպե՞ս են հագնվում մարդիկ աշնանաը:

- Երեխաների պատասխանները:

Աշխուժացնող խաղ «Տերևաթափ»[1]

Խաղն ավարտել Հ. Թումանյանի «Քամի» բանաստեղծության արտասանությամբ:

Դաստիարակ- Աշունն այնքան գեղեցիկ է, որ մեր բանաստեղծները, երգահաններն ու նկարիչները գովերգել են այն իրենց ստեղծագործություններում:

Եկե՛ք վերհիշենք, թե որ անվանի նկարիչներն են իրենց ստեղծագործություններում պատկերել աշունը (Մ. Սարյան « Աշնանային ծաղիկներ», Գ. Բաշինջաղյան «Աշուն»):

Երեխաներն արտասանում են Հ. Թումանյանի «Աշուն» բանաստեղծությունը, այնուհետև խումը երգում է Ա. Քիշմիշյանի «Ի՞նչ է կատարվում » երգը:

Դաստիարակ- Ի՞նչ բառերով կարելի է նկարագրել աշունը:

Երեխաներ- ոսկեզոծ աշուն, գեղեցիկ աշուն, բերքառատ աշուն, դեղնակարմրավուն աշուն, աշնանային տերևաթափ և այլն:

Այնուհետև երեխաներն աշխատում են արվեստի կենտրոնում:

Նկարչություն-այլընտրանքային մեթոդով նկարել «Ոսկե աշուն» (աշնանային ծառը պատկերել սպունգի օգնությամբ և գուաշով):

Ապլիկացիա- Համագործակցությամբ պատռման մեթոդով ստանալ աշնանային ծառ՝ գույնզգույն տերևներով:

Կառուցողական- Աշխատանք բնական նյութերով (տերևներով):

Ծեփակերտում-Պլաստիլինից ծեփել մրգեր:

Կշռադատման փուլ

1. Ի՞նչի մասին էինք զրուցում:
2. Ի՞նչը ձեզ դուր եկավ:
3. Ի՞նչ նվիրեց մեզ աշունը:
4. Ի՞նչի մասին կպատմեք ձեր ընտանիքի անդամներին:

*1. Տե՛ս «Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում» Հ. Միտոյան, Լ. Սմբատյան, 2013թ գրքում, էջ 28:

Ինձ շրջապատող աշխարհը

Ձևավորել տարական գիտելիքներ տարվա եղանակների, դրանց հերթականությամբ պայմանավորված բնության սեզոնային փոփոխությունների և մարդկանց կյանքում աշնանը կատարվող փոփոխությունների մասին:

Աշուն

Աշխատանք բակում

Աշխատանքներ բանջարանոցում (բերքի հավաքում և չորացած տերևների մաքրում)

Դերախաղ

Մնջախաղ՝ ցուցադրել մրգեր և բանջարեղեն

Բեմականացնել «վիտամիններ» ոտանավորը

Երաժշտություն

«Աշնան երգ-պար»

Ա. Սուլթանյան

«Ի՞նչ է կատարվում»

Ա. Քիզմիզյան

Կերպարվեստ և կառուցողական աշխատանք

Նկարել «Ոսկե աշուն» այլընտրանքային մեթոդով

Ծեփել մրգեր

Աշխատանք բնական նյութերով

պատռման մեթոդով ստանալ աշնանային ծառ

Խոսքի զարգացում

Զրույց աշնան մասին

Դիդակտիկ խաղ «Տարվա եղանակները»

Նկարի պատմում « Աշուն»

Մաթեմատիկա

Թվարկել աշնան ամիսները,

Դասակարգել տարվա եղանակները



Այսպիսով, կատարված աշխատանքը հանգեցրեց այն եզրահանգմանը, որ մանկավարժական գործընթացում կազմակերպված ինտեգրված պարապմունքները ունեն և՛ ուսուցողական, և՛ դաստիարակչական բնույթ: Այս պարապմունքների ընթացում երեխաները ոչ միայն սովորեցին ներկայացնել աշնանը բնորոշ փոփոխությունները, ճանաճել չվող թռչուններին, նկարել աշնանային ծառ, այլև ընկալեցին եղանակին բնորոշ առանձնահատկությունները, բնությանը, կենդանիներին խնամքով վերաբերվելու անհարժեշտությունը և այլն:

Արդյունքնում սաներիի գիտելիքները աշնան մասին ունեին հետևյալ տոկոսային հարաբերությունը՝ գերազանց 60%-ը, բավարար՝ 30%-ը, մասամբ ստացան գիտելիքներ՝ 10%-ը:

Եզրակացություն

Հետազոտական աշխատանք եմ կատարել միջին խմբում՝ ինտեգրված պարապմունք անցկացնելով «Աշուն» թեմայով, որի արդյունքում սաների գիտելիքները աշնան մասին ունեն հետևյալ տոկոսային հարաբերությունը՝ գերազանց 60%-ը, բավարար՝ 30%-ը, մասամբ ստացան գիտելիքներ՝ 10%-ը:

Աշխատանքի արդյունում պարզ դարձավ նաև, որ ինտեգրված պարապմունքը կառուցվում է մեկ ամբողջական հենքով, որը միավորում է հսկայական տեղեկատվական դաշտ՝ փոխադարձ ներթափացմամբ և ընդհանրացումներով:

Եկա այն եզրահանգման, որ ինտեգրված յուրաքանչյուր պարապմունք նպատակաուղղված է նախադպրոցականի ներդաշնակ զարգացմանը, օգնում է ճիշտ պլանավորած նպատակները հասցնել իրենց վերջնարդյունքներին, ստեղծում է ուրախ, աշխույժ մթնոլորտ: Նման մթնոլորտը երեխաներին վստահություն է ներշնչում արդեն իսկ ձեռք բերած գիտելիքները հմտորեն կիրառելու համար: Դա է պատճառը, որ իմ մանկավարժական գործունեության մեջ կիրառում եմ ինտեգրված պարապմունքներ: Ուսումնասիրելով «Ինտեգրված պարապմունքների կազմակերպումը՝ կարողունակահեն կրթական մոտեցման համատեքստում» թեման՝ հանգեցինք հետևյալ եզրակացություններին՝

- Յուրաքանչյուր երեխա ունի որակյալ կրթություն ստանալու իրավունք:
- Դաստիարակի առաքելությունն է կրթել համակողմանի և ներդաշնակ զարգացած անձ:
- Կիրառել ներկայումս լայն տարածում գտած ակտիվ ուսուցման մեթոդները՝ ինտերակտիվ կամ փոխգործուն:

Ինտեգրված պարապմունքը նպաստում է.

- երեխաների միջև խաղային և խոսքային փոխհարաբերությունների կայացմանը,
- հիշողության, իմացական և հուզական ոլորտների զարգացմանը

Զարգացնում է.

- քննադատական մտածողությունը,
- հետքրքրասիրություն,

- անմիջականությունը,
- երևակայությունը,
- աշխատանքից գեղագիտական հաճույք ստանալու կարողությունը

Ավանդական և փոխգործուն մեթոդների համադրումով աշխատանքը, խաղային տեխնոլոգիաների կիրառումը, դիդակտիկ նյութերով հագեցվածությունը, պարապմունքի ճիշտ նպատակի սահմանումը, վերջնարդյունքերի ապահովումը և դրանից բխող ինը կարողունակությունների ձևավորումը ինտեգրված պարապմունքները կդարձնեն հաջողված: Այսպիսով, կատարված աշխատանքների արդյունքում պարզ դարձավ, որ ուսուցման այս ձևը միջանկյալ կապեր է հաստատում առարկաների և երևույթների միջև, և հենց այսպիսի կառուցվածք ունի ինքը՝ կյանքը:

Հավելված

Գրականության ցանկ

1. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք
2. «Նախադպրոցական կրթության մասին պետական չափորոշիչներ» Երևան, 2021
3. «Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տ) կրթական հիմնական ծրագիր» ԿԶՆԱԿ հիմնադրամ, 2023
4. «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» Հ. Միտոյան, Լ. Սմբատյան, 2010թ.
5. «Խոսքի զարգացման պարապմունքները մանկապարտեզի միջին խմբում» Հ. Միտոյան, Լ. Սմբատյան, 2013թ.
6. «3-6 տարեկան երեխաների կրթական ծառայությունների կազմակեպումն այլընտրանքային մեթոդներով» ,UNICEF Երևան, 2018
7. «Իմ մանկապարտեզը» Ա. Հովակիմյան, Երևան, 1991
8. «Ինտեգրումը կրթության գործընթացում» Տ. Փնջոյան, 2018
9. Նախաշավիղ 4, 2013թ
10. «Ինտեգրված կրթություն» Վիքիպեդիա
11. ԿԶՆԱԿ հիմանդրամ